ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5, 1956 Общественные науки

Հ. Մելիքյան, Մ. Խոճդկարյան

ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԴԵՐԸ ԼՈՌՈՒՄ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ
(1899—1908 թթ.)

Կոմունիստական պարտիայի ականավոր գործիչ, Վ. Ի. Լենինի աշակերտ ու զինակից Ստեփան Շահումյանը պատկանում է լենինյան տիպի պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներների փայլուն պլեադային։ Նա՝ բոցաշունչ ռևոլյուցիոներ իր ամբողջ հիանալի կյանքը նվիրաբերել է պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակի, աշխատավոր մասսաներին ցարիզմի ու կապիտալիզմի լծից ազատագրելու գործին, Կոմունիստական պարտիայի ստեղծման ու ամրապնդման գործին։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակին և հատկապես ռևոլյուցիայի տարիներին Ստ. Շահումյանը Անդրկովկասում բազմաբովանդակ ռևոլյուցիոն գործունեություն էր ծավալում։ Կովկասյան ականավոր բոլշևիկ գործիչների հետ միասին, նա մարտնչում էր անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների ստեղծման, նրանց ամրապնդման, ռևոլյուցիայի լենինյան ստրատեգիայի ու տակտիկայի անաղարտ իրականացման համար։ Լինելով պարտիայի աննկուն զինվորը, նա սրբությամբ իրագործում էր նրա ամեն մի հանձնարարությունը, թեորիական-պրոպագանդիստական և պարտիական-կազմակերպական մեծ աշխատանք ծավալում։ Պաշտպանելով ու պրոպագանդելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարները, նա անհաշտ պայքար էր մղում բուրժուական-նացիոնալիզմի դեմ, իր գործունեությամբ ամրապնդում էր Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությունը, բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքը։ Նա հանդիսանում էր կովկասյան բոլշևիկյան մամուլի ականավոր կազմակերպիչներից մեկը։ Ստ. Շահումյանը Կովկասյան բոլշևիկյան կենտրոնի հանձնարարությամբ շրջագայում էր Անդրկովկասի, ինչպես բանվորական, այնպես էլ գյուղացիական շրջանները, անձամբ մասնակցում ու ղեկավարում էր բանվորների ու գյուղացիների բազմաթիվ ռևոլյուցիոն ելույթները, կազմակերպում ժողովրդական մասսաների պայքարը ցարիզմի դեմ։

* *

Ստ. Շահումյանի ռևոլյուցիոն գործունեության անբաժան մասն է կազմում նրա աշխատանքը Լոռում՝ լենինյան-իսկրայական կազմակերպությունների ստեղծման, նրանց իդեական և կազմակերպական ամրապնդման, ռևոլյուցիոն շարժման ծավալման ասպարեզում։

20-րդ դարի սկզբին Ալավերդու պղնձի հանքերում և պղնձաձուլական գործարաններում աշխատում էին տարբեր ազգերի մոտ 5000 բանվորներ, որոնք անասելի ծանր շահագործման էին ենթարկվում գործարանատերերի կողմից։

Բավականաչափ բանվորներ էին ընդգրկված նաև Անդրկովկասյան երկաթուղու Լոռու բաժանմունքում, հատկապես Սանահինի շոգեքարշային դեպոյում։ Բանվորների դաժան շահագործումը, կենցաղային ծանր պայմանները, գործարանատերերի կողմից կիրառվող կամայականությունները առաջ էին բերում բանվորների խիստ գժգոհությունը և նրանց մղում դեպի գործադուլներ, դեպի պայքար։ Հայաստանի մյուս շրջանների համեմատությամբ Լոռում ավելի ուժեղ էին արտահայտվում նաև ճորտատիրության մնացորդները, գյուղացիության շահագործումը։ Դրա հետևանքով, ինչպես և բանվորական շարժման ազդեցության տակ Լոռում ավելի ուժեղ էր արտահայտվում ագրարային շարժումը։ Այդ բոլորի պատճառով սոցիալ-դեմոկրատական գիտակցությունը Լոռում բավականաչափ նպաստավոր հող էր գտնում։

Ալավերդին, ինչպես և ամբողջ Լոռին լինելով Հայաստանի պրոլետարական շարժման կարևորագույն կենտրոնը, կովկասյան բոլշևիկյան կազմակերպության ղեկավարների մշտական ուշադրության կենտրոնում էր գտնվում։ Ալավերդին, Ալեքսանդրոպոլի հետ միասին, ծառայում էր պրոլետարական հուսալի բազա Հայաստանում՝ ռևոլյուցիոն շարժումը ծավալելու համար։

Ստ. Շահումյանը Լոռում առաջին անգամ եղել է 1896 թ., երբ նա դեռևս Թիֆլիսի ռեալական ուսումնարանի աշակերտ էր։ Սկսած այդ թվականից՝ հետագա մի շարք տարիների ընթացքում նա գրեթե ամեն ամառ գնում էր Ջալալօղլի (այժմ Ստեփանավան), որտեղ և իր շուրջն էր համախմբում տեղի առաջադեմ երիտասարդներին։

1899 թվականի ամռանը Շահումյանին հաջողվում է նրանցից առավել ակտիվներից ստեղծել մարքսիստական խմբակ։

Հայաստանի տերիտորիայում այդ առաջին մարքսիստական խմբակը խոշոր դեր է խաղացել Լոռում, ինչպես և ամբողջ Հայաստանում, մարքսիզմի տարածման գործում։

Հետագա մի շարք տարիների ընթացքում, յուրաքանչյուր ամառ, Շահումյանի Ջալալօղլի գալու հետ մեկտեղ, խմբակը վերսկսում էր իր պարապմունքները, որոնք սովորաբար տեղի էին ունենում գյուղից դուրս, հիմնականում «Մայորի ձոր» կոչված վայրում։ Հաճախ կոնսպիրացիոն նպատակներով, խմբակը հավաքվում էր նաև անտառում, «Գոմերի ձորում», գերեզմանոցում և այլն։

Թիֆլիսից Ստ. Շահումյանը իր հետ բերում էր մարքսիստական գրականություն, որը կարդացվում և քննարկվում էր խմբակի պարապմունքների ժամանակ։ Այդ գրքերից էլ ստեղծվեց խմբակի գրադարանը, որը խոշոր դեր խաղաց խմբակի անդամների տեսական-մարքսիստական դաստիարակության գործում։

«... 1899 թվականից արդեն մենք կանոնավոր պարապմունքներ էինք ունենում Ստեփանի ղեկավարությամբ,— պատմում է իր հուշերում խմբակի անդամ հին բոլշևիկ Ալ. Թումանյանը։— Նա ամեն տարի իր հետ բերում էր թռուցիկներ..., գրականություն, գլխավորապես բրոշյուրային, ինչպես, օրինակ «Կոմունիստական պարտիայի Մանիֆեստը», «Վարձու աշխատանք և կապիտալ» ու նման հրատարակություններ, որոնք մեզ ծանոթացնում էին մարքսիզմի հիմնական հարցերի հետ։ Այս բոլորը ձեռքից ձեռք անցնելուց ու կարդացվելուց հետո գնում էր գրադարան, որը պահվում էր «Մայորի ձորում» եղած մի փոքր այրում։

Այսպիսով տարեց-տարի մեր գրադարանը հարստանում էր... Երբեմն գրադարանը լույս աշխարհ էր գալիս մեր տները և նայած հանգամանքներին, էլի իջնում էր ձորը»։

Ստ. Շահումյանը, որն արդեն բավականաչափ ուսումնասիրել էր Մարքսի, Էնգելսի, Լենինի աշխատությունները, իր գիտելիքները ու երիտասարդի ամբողջ եռանդը գործի էր դնում խմբակի պարապմունքները հետաքրքիր դարձնելու համար։ Նա աշխատում էր դեպի մարքսիզմը հակված երիտասարդներին տալ այն ամենը, ինչ գիտեր ինքը բնության ու հասարակության զարգացման օրենքների մասին։

Մարքսիստական գիտելիքները, որոնք ձուլվում էին Շահումյանին հատուկ պրոպագանդիստական արվեստի հետ, խմբակի պարապմունքները դարձնում էին վերին աստիճանի բովանդակալից ու հետաքրքիր։

Խմբակի պարապմունքները սերտորեն կապելով պրակտիկայի հետ, առաջ բաշված տեսական դրույթները ապացուցելով Անդրկովկասի ռևոլյուցիոն պայքարի բազմաթիվ փաստերով, Ստ. Շահումյանը իր խմբակի ունկնդիրներից պատրաստում էր ոչ թե սոսկ աշակերտներ, որոնք կարող էին հարմար առիթին կրկնել լավ ուսուցչից սովորած դրույթները, այլ առաջին հերթին ռևոլյուցիոներներ, որոնք ընդունակ պետք է լինեին դաստիարակելու մասսաներին, նրանց ռևոլյուցիոն պայքարի հանելու ընդդեմ ցարիզմի, կալվածատերերի ու բուրժուազիայի։

ՌՍԴԲՊ Թիֆլիսի կոմիտեի ստեղծումից հետո, խմբակի աշխատանքները նոր թափ են ստանում։ 1901 թ. վերջերին խմբակին հաջողվում է ձեռք բերել խմորատիպ (հեկտոգրաֆ), որի օգնությամբ 1902—1907 թթ. շրջանում մի շարք անգամ տպագրել ու Ալավերդու, Սանահինի բանվորների, ինչպես նաև Ջալալօղլու, Հաղպատի, Վարդաբլուրի, Կուրթանի, Ուզունլարի, Վորոնցովկայի և այլ գյուղերի գյուղացիների մեջ է տարածել ինչպես ինքնուրույն, այնպես էլ արտատպված բազմաթիվ թռուցիկներ ու պրոկլամացիաներ։ Այդ պրոկլամացիաները հաճախ տարածվում էին նաև Հայաստանի այլ շրջաններում։

Խմբակը աշխատանք էր ծավալել նաև Ջալալօղլում տեղավորված զորամասերի մեջ, կապ էր հաստատել Ալավերդու գործարանի և մի շարք գյուղերի հետ։

1902 թ. ամռանը խմբակը հեկտոգրաֆով 100 օրինակ բազմացնում ու հայաբնակ շրջաններում տարածում է Շահումյանի կողմից Ղազարոս Աղայանի գործունեության 40-ամյակի առթիվ գրված ելույթը[2]։

Ռևոլյուցիոների մեծ կրքով գրված այդ փաստաթղթի մեջ Շահումյանը մարքսիզմի դիրքերից մերկացնում էր հայ լիբերալ բուրժուազիային, ցույց էր տալիս նրա պարծենկոտ շաղակրատանքները «հայ ազգի» փրկության ուղիների մասին, հայ առաջադեմ հասարակությանը ծանոթացնում էր անցյալ դարի 40—60-ական թվականների ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատական մտքի անցած հերոսական ուղուն, «ժողովրդի դահիճների դեմ» քաղաքական պայքարի էր կոչում հայ ժողովրդի լավագույն զավակներին։ Այդտեղ է, որ Շահումյանը հայտարարում էր.

---

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստ. Հայկական ֆիլիալի արխիվ. ֆ. [illegible], գ. 3, թ. [illegible]։
[2] Նույն տեղում, ֆ. 40, գ. 6, թ. 42—43։

«... Մենք քաղաքական-ռևոլյուցիոն կռիվ ենք քարոզում. բուրժուական «ազգասիրության» ու «ազատամտության» փլատակների վրա մենք կարմիր, պրոլետարական դրոշակ ենք պարզում, որի վրա գրում ենք առայժմ.

«Կռի՛վ բռնակալության դեմ.

Կեցցե՜ քաղաքական ազատությունը»...[1]

Ստ. Շահումյանի հիմնադրած ու ղեկավարած մարքսիստական խմբակից՝ 1903 թվականի վերջերին, ՌՍԴԲՊ 2-րդ համագումարից հետո, ձևավորվում է տեղի սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպությունը։

ՌՍԴԲՊ 2-րդ համագումարից հետո, 1903 թ. ամռան և աշնան ամիսներին Ջալալօղլու մարքսիստական խմբակի մի շարք անդամների և հատկապես Ստ. Շահումյանի ու ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեի կողմից ուղարկված պրոպագանդիստ-կազմակերպիչների ջանքերով. Հաղպատում, Ալավերդու գործարանում, Սանահինի դեպոյում ու կայարանում, Ջալալօղլում կազմակերպչորեն ձևավորվում են բոլշևիկյան խմբակները։ Այդ գործում խոշոր դեր է խաղացել ՌՍԴԲՊ Բաքվի 1-ին Կոմիտեի անդամ, ականավոր բանվոր-ռևոլյուցիոներ Մելիք Մելիքյանը (Դեդուշկա), ինչպես նաև ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեի կողմից Լոռուն ամրացված պրոպագանդիստ-կազմակերպիչ Ասատուր Կախոյանը։

Հաղպատի կազմակերպությունը Հայաստանում բոլշևիկյան առաջին կազմակերպությունն էր։ Լոռու մարքսիստական խմբակներից նա առաջինն էր, որ ճանաչվեց ՌՍԴԲՊ Կովկասյան Միությունական Կոմիտեի կողմից։

Ալավերդու գործարանին ու երկաթուղուն մոտ լինելը, բանվորական միջավայրը օբեկտիվորեն նպաստում էր Հաղպատում սոցիալ-դեմոկրատական աշխատանքի ակտիվ կազմակերպմանը։

Հաղպատի բոլշևիկյան կազմակերպությունը ավելի ամրապնդվեց ու մարտական դարձավ 1903 թ. վերջերին, երբ այնտեղ գյուղացիները հերոսական, զինված ելույթով պատասխանեցին կալվածատեր Բարաթովի մեքենայություններին և հրաժարվեցին տեղական իշխանությունների կամքը կատարելուց։

Հաղպատի բոլշևիկների ակտիվ մասնակցությամբ 1904—1905 թթ. սոցիալ-դեմոկրատական խմբակներ ստեղծվեցին հարևան Սանահին, Աքորի, Որնակ գյուղերում, ինչպես նաև Ախթալա կայարանում ու Հաղպատ կիսակայարանում։

Հայաստանի բանվորական շարժման պատմության մեջ ուրույն տեղ են գրավում Ալավերդու գործարանի և Սանահինի շոգեքարշային դեպոյի ու կայարանի պարտիական կազմակերպությունները, որոնց գործունեությունը առանձնահատուկ նշանակություն ստացավ ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին։

Լոռու բոլշևիկյան խմբակները մտնում էին ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպության մեջ և ենթարկվում էին ՌՍԴԲՊ Կովկասյան Միության Թիֆլիսի կոմիտեին։

Հայաստանի, այդ թվում և Լոռու մարքսիստական առաջին խմբակները, բոլշևիկյան կազմակերպությունները ստեղծվել են հայ ժողովրդի ոխերիմ թշնամի դաշնակցականների ու բուրժուական այլ նացիոնալիստների դեմ Կովկասյան բոլշևիկների մղած անհաշտ պայքարի պայմաններում։

---

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, 1948, էջ 20—21։

Խոսելով Հայաստանում ստեղծված առաջին սոցիալ-դեմոկրատական խմբակների մասին, Ստ. Շահումյանը գրել է. •

«Տնտեսական հարաբերությունների հետագա զարգացումը Կովկասում մի կողմից, և բանվորական շարժման արագ զարգացումը համայն Ռուսաստանում և մասնավորապես Կովկասում 90-ական թթ. վերջին ու 900-ական թթ. սկզբին՝ մյուս կողմից՝ իրենց գործը կատարեցին նաև հայկական պրովինցիայի նկատմամբ... Հայ բանվորները ներգրավվեցին ռևոլյուցիոն պայքարի մեջ։ Չնայած «դաշնակցականների» ամբողջ հակագործունեությանը, հայերի մեջ ծնունդ առան առաջին սոցիալ-դեմոկրատական խմբակները, որոնք հայ բանվորներին միևնույն բանակի մեջ կապակցեցին վրացի, ռուս և այլ բանվորների հետ և նրանց առաջ դրին լայն ռևոլյուցիոն խնդիրներ»[1]։

Իհարկե 1902 թվականի աշնանը Շահումյանը անձամբ ծանոթանում է Լենինի հետ։ Այդ տարվանից սկսած նա սերտ կապեր հաստատեց ռևոլյուցիայի մեծ ստրատեգի հետ, դարձավ նրա հավատարիմ աշակերտն ու զինակիցը։ Ռևոլյուցիայի առաջնորդի հետ ունեցած անձնական ծանոթությունը և բարեկամությունը ամրապնդեց երիտասարդ Շահումյանի մարքսիստական համոզմունքները, նպաստեց նրա տեսական ու պրակտիկ խոշոր գործիչ դառնալուն։

ՌՍԴԲՊ 2-րդ համագումարից հետո պարտիայի մեջ բոլշևիկյան և մենշևիկյան ֆրակցիաների երևան գալուց հետո, Ստ. Շահումյանը վճռական կերպով կանգնեց Վ. Ի. Լենինի կողմը և մինչև իր կյանքի վերջը հավատարիմ մնաց լենինյան սկզբունքներին։

1904 թ. Բեռլինից վերադառնալով Թիֆլիս, Շահումյանը սերտ կապ է հաստատում Անդրկովկասյան բոլշևիկյան կենտրոնի հետ։ Շուտով նա ընտրվում է ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական Կոմիտեի և «Պրոլետարիատի կռիվ» լրագրի խմբագրական կոլեգիայի կազմում։

Թիֆլիսի պահնորդական բաժանմունքի պետ Զասիպկինը 1904 թ. հուլիսի 13-ի իր № 1619 գրությամբ նահանգական ժանդարմական պետին հաղորդում է. «Ոստիկանության դեպարտամենտի 1903 թվականի մարտի 22-ի և օգոստոսի 28-ի № № 2906 և 7920 շրջաբերականներում հիշված Ստեփան Գևորգով Շահումյանը սույն թվականի ապրիլի 8-ին վերադառնալով Թիֆլիս, ներկայումս՝ անցած հունիս ամսի 27-ին մեկնեց Ջալալօղլի ավանը»[2]։

Այդ նույն գրության մեջ պահնորդական բաժնի պետը խնդրում էր տեղեկություններ հաղորդել Ստ. Շահումյանի Ջալալօղլում գտնվելու մասին։

Ստանալով այդ գրությունը, Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության պետը հուլիսի 17-ին մի գաղտնի գրություն է ուղարկում Բորչալուի գավառապետին, որի մեջ գրում է. «Ըստ ստացված տեղեկությունների՝ ոստիկանության դեպարտամենտի 1903 թ. մարտի 22-ի և օգոստոսի 28-ի № № 2906 և 7920 շրջաբերականներով որոնվող, պետական հանցագործության մեջ մեղադրվող Ստեփան Գևորգով Շահումյանը ներկայումս ապրում է Ձեզ վստահած գավառում, Ջալալօղլի վայրում։

Հայտնելով այդ մասին, խնդրում եմ Ձերդ բարձր բարեծնության կարգա-

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, 1948, էջ 224։

[2] Փաստաթղթի պատճենը պահպանվում է Ստեփանավանի Շահումյանի Տուն-թանգարանում։

դրությունը՝ որոնելու հիշված Շահումյանին Բորչալուի գավառում և գտնելու դեպքում նրա մասին անլեգալ ճանապարհով տեղեկություններ հավաքել և հայտնել ինձ նրա զբաղվելու բնույթը, ապրելու միջոցները, ծանոթության շրջանները, ինչպես և ծածկաբար իմանալ որ ժանդարմական վարչության կողմից է նա մեղադրվել և ինչի համար»[1]։

Ստ. Շահումյանի Լոռում գտնվելը համընկնում է մեր պարտիայի պատմության այն շրջանին, երբ ՌՍԴԲՊ 2-րդ համագումարից հետո մենշևիկներն իրենց օպորտունիստական վարքագծով քայքայում էին պարտիական կազմակերպությունները, աշխատում էին այդ կազմակերպությունները դարձնել Լենինի և բոլշևիկների դեմ մենշևիկների մղած օպորտունիստական պայքարի գործիքներ։

Ելնելով լենինյան այն դրույթներից, որ չի կարելի հանդուրժել օպորտունիզմ իր միջավայրում, ինչպես որ չի կարելի խոց հանդուրժել առողջ օրգանիզմի մեջ, որ ամրոցներն ամենից հեշտ վերցվում են ներսից, Ստ. Շահումյանը Լոռու բոլշևիկյան կազմակերպությունները զինում էր այն գիտակցությամբ, որ հաղթանակ ձեռք բերելու համար ամենից առաջ պետք է մաքրել բանվոր դասակարգի պարտիան, նրա ղեկավար շտաբը, պարտիան պետք է զտել կապիտուլյանտներից, դասալիքներից, շտրեյկբրեխերներից, դավաճաններից։

1904 թ. Լոռու բոլշևիկների հետ ունեցած մի շարք խորհրդակցություններում Շահումյանը վերահաս ռևոլյուցիայի նախօրյակին ավելի էր սրում բուրժուական նացիոնալիզմի, որպես Անդրկովկասում ռևոլյուցիայի ամենավտանգավոր թշնամու դեմ մղվող պայքարի հարցը։ Նա նշում էր, որ Կովկասում ռևոլյուցիայի ամենաոխերիմ թշնամին միշտ եղել է և կմնա նացիոնալիզմը, հետևաբար հետևողական, մշտական պայքարը նրա դեմ պետք է բոլշևիկյան կազմակերպությունների ամենօրյա աշխատանքը լինի։

Բուրժուական նացիոնալիզմի և կովկասյան մենշևիկների դեմ մղած համառ պայքարում ավելի ամրապնդվեց Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունը, որը ղեկավարեց Անդրկովկասի բանվորների և գյուղացիների պայքարը 1905—1907 թթ. ռևոլյուցիայում։

* *

1905 թ. ռևոլյուցիոն շարժման աճող վերելքի շրջանում Լոռի եկավ Ստ. Շահումյանը։

Բաքվի և անդրկովկասյան այլ արդյունաբերական կենտրոնների բանվորական հզոր ցույցերի անմիջական ազդեցության տակ, Ստ. Շահումյանի ղեկավարությամբ, 1905 թ. մայիսի 1-ը նշվեց նաև Ալավերդում։

Լոռու հին բոլշևիկներից Ս. Իսրայելյանը իր հուշերում պատմում է.

«Ստեփան Շահումյանը Հաղպատ եկավ 1905 թ. գարնանը։ Շահումյանի ղեկավարությամբ ընտրվեց կոմիտեն, որոշվեց տոնել մայիսի 1-ը։ Հետո Շահումյանի հետ միասին գնացինք Մանես և այնտեղ միտինգ կատարեցինք մայիսի 1-ի առթիվ։ Միտինգը տեղի ունեցավ զավոդի առաջ՝ հրապարակում, որ-

[1] Փաստաթղթի պատճենը պահպանվում է Ստեփանավանի Շահումյանի Տուն-թանգարանում։

տեղ հավաքվել էր ահագին բազմություն։ Խոսեցին Շահումյանը, Սերգո Փիրուզյանը[1] և ուրիշները։ Մեր կարմիր դրոշակը բարձրացրինք այնտեղ»[2]։

Բարձրացող բանվորական շարժմանը զուգընթաց՝ ուժեղանում էր նաև գյուղացիության ռևոլյուցիոն շարժումը։ Բոլշևիկյան լոզունգներով ընթացող գյուղացիական միտինգներ, կալվածատիրական ու եկեղեցապատկան հողերի բռնագրավում, արոտավայրերի բռնի օգտագործում, կալվածատիրական և պետական անտառների կտրատում, մասսայական հրաժարում հարկերի և տուրքերի վճարումից, չինովնիկների, կառավարիչների սպանություններ, պայքար կուլակների ու վաշխառուների դեմ — ահա ռևոլյուցիայի տարիներին Լոռու գյուղացիության ռևոլյուցիոն պայքարի ընդհանուր պատկերը։

Հողի ու ազատության համար ոտքի կանգնած գյուղացիության շարժումը ղեկավարվում էր տեղական բոլշևիկյան կազմակերպությունների կողմից, որոնք եռանդուն աշխատանք էին տանում զենքի և զինամթերքի հայթայթման, բանվորներին զինելու ուղղությամբ։

Այս գործում նրանց օգնում էր նշանավոր բոլշևիկ Կամոն։

Լոռում սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների իդեական ու կազմակերպչական ամրապնդմանը մեծապես նպաստեց 1905 թ. օգոստոսին Ստ. Շահումյանի ղեկավարությամբ Հաղպատում տեղի ունեցած Լոռու սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների և խմբակների պարտիական առաջին ընդլայնված խորհրդակցությունը, որը փաստորեն խաղաց կոնֆերենցիայի դեր։

Զեկուցելով Ռուսաստանում ստեղծված քաղաքական իրադրության, պարտիայում տիրող դրության և ռևոլյուցիայի հեռանկարների մասին և ելնելով ՌՍԴԲՊ 3-րդ համագումարի որոշումներից, Ստ. Շահումյանը Լոռու բոլշևիկների առաջ խնդիր դրեց՝ մոբիլիզացնել բոլոր ուժերը և աշխատավորությանը պարզաբանել դաշնակցության գործունեության ռեակցիոն էությունը։ Բանն այն է, որ ռևոլյուցիայի տարիներին հայկական բուրժուական նացիոնալիստները և առաջին հերթին հայ ժողովրդի ոխերիմ թշնամիները՝ դաշնակները ավելի սանձարձակ էին դարձել։

Շարունակելով Անդրկովկասում ռևոլյուցիոն շարժման դեմ պայքարելու իր վաղեմի քաղաքականությունը, «դաշնակցությունը» հայ բուրժուազիայի քաղաքական տիրապետությունը հաստատելու համար, չարաշահելով ժողովրդի հայրենասիրական զգացմունքները, ծավալում էր ռեակցիոն, ժողովրդի համար կործանարար ավանտյուրիստական գործունեություն, ձգտում էր այդ գործունեության մեջ ներգրավել հայ աշխատավորությանը։ Այդ նպատակով՝ դաշնակցությունը և բուրժուա-նացիոնալիստական մյուս պարտիաները ու խմբերը պրոլետարիատի դասակարգային պայքարի թեորիային հակադրում էին ազգի համերաշխության բուրժուական թեորիան։ Նրանք ամեն կերպ պայքարում էին տարբեր ազգերի աշխատավորների համերաշխության դեմ, ձգտում էին ինչ գնով էլ ուզում է լինի անջատել հայ պրոլետարիատին և գյուղացիությանը ռուս և հարևան ազգերի պրոլետարիատից ու գյուղացիությունից, համառուսական ռևոլյուցիոն շարժումից։

---

[1] Ս. Փիրուզյանը ՌՍԴԲՊ Ալավերդու կազմակերպության աչքի ընկնող անդամներից էր։

[2] Մարքսիզմ-լենինիզմի ինստ. հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 40, գ. 5, թ. 57—58։

Պճնվելով «սոցիալիստական» ֆրազներով բուրժուական նացիոնալիստները ռևոլյուցիայի տարիներին աշխատում էին «ռևոլյուցիոն» կեղծ լոզունգներով թող փչել մասսաների աչքերին և նրանց տանել իրենց հետևից։

Լոռու այն գյուղերում, որտեղ դեռևս «դաշնակցությանը» հաջողվում էր իր ազդեցությունը պահպանել, հաստատվել էր դաժան, կատարյալ բոնապետական ռեժիմ։ Օգտվելով ցարիզմի կազմակերպած հայ-ադրբեջանական կոտորածներից, «դաշնակցությունը» Լոռու մի քանի գյուղերում հաստատել էր իր «դատարանները», կոմիտեները, որոնք կատարյալ պատուհաս էին դարձել աշխատավոր գյուղացիության գլխին։

Ելնելով ՌՍԴԲՊ 3-րդ համագումարի որոշումներից՝ Սա. Շահումյանը օգոստոսյան խորհրդակցությունում Լոռու բոլշևիկների առաջ խնդիր դրեց ուժեղացնել աշխատանքը Ալավերդու և Երկաթուղու բանվորների մեջ, ավելի լուրջ ուշադրություն դարձնել գյուղական պրոլետարների ու կիսապրոլետարների կազմակերպման, նրանց սոցիալ-դեմոկրատական աշխատանքի մեջ ներգրավելու, նրանց դասակարգային գիտակցություն կոփելու վրա։ Նշելով կալվածատիրության դեմ մղվող պայքարի անհրաժեշտությունը, նա միաժամանակ գտնում էր, որ պետք է մերկացնել կուլակության դասակարգային էությունը և սրել գյուղական պրոլետարիատի կողմից կուլակության դեմ մղվող պայքարը։

Լոռու բոլշևիկների առաջին խորհրդակցությունը խոշոր դեր կատարեց ռևոլյուցիոն աշխատանքի ծավալման, բուրժուա-նացիոնալիստական պարտիաների մերկացման գործում։ Խորհրդակցությունից հետո մասսաների մեջ տարածվեց «Բորչալուի գյուղացիներին» նշանավոր կոչը, որը լայնորեն քննարկվեց գյուղացիական ժողովներում, միտինգներում։

1905 թ. ամռանը Հայաստանի բոլշևիկները մեծ աշխատանք են ծավալում նաև Լոռու ռուսական գյուղերում։ 1905 թ. հուլիսի վերջերին մալականներին Լոռում բնակեցնելու 100-ամյակի կապակցությամբ Վորոնցովկա գյուղում տեղի է ունենում «մալականների համագումարը», որին հրավիրված էր մասնակցելու նաև Կովկասի ժողովուրդների դահիճ՝ փոխարքա Վորոնցով-Դաշկովը։ Այդ դեպքի առիթով Շահումյանը, որն այդ ժամանակ գտնվում էր Լոռում, գրում է մալականներին ուղղված «Քաղաքացի մալականներ» կոչը, որի մեջ նա ցույց է տալիս մալականների նկատմամբ ցարիզմի վարած քաղաքականության ռեակցիոն էությունը և կոչ է անում նրանց միացյալ ուժով տապալել ցարիզմը։

ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական Կոմիտեի կողմից ղեկավարվող Լոռու սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների աշխատանքը տվեց իր որոշակի արդյունքները։

1905 թ. նոյեմբերին ՌՍԴԲՊ Ալավերդու կազմակերպության ղեկավարությամբ սկսվեց բանվորների քաղաքական խոշոր գործադուլը։ Ալավերդու բանվորներին միացան նաև Սանահինի երկաթուղայինները և հարևան գյուղերի բազմաթիվ գինված գյուղացիներ։ Նոյեմբերի 19-ից մինչև 25-ը Ալավերդում և Սանահինում տեղի ունեցան խոշոր քաղաքական ցույցեր, որոնք հանդիսացան տարբեր ազգերի բանվորների ու գյուղացիների եղբայրական բարեկամության վառ դրսևորումը։

Անդրադառնալով Ալավերդու բանվորների նոյեմբերյան գործադուլի ժամանակ տարբեր ազգությունների բանվորների միասնական պայքարին, բոլշևիկյան „Кавказский рабочий листок“ լրագիրը գրել է. «Այստեղ բոլոր

ազգությունների բանվորները՝ հայերը, պարսկահպատակ թաթարները, վրացիները և ռուսները կարմիր ռևոլյուցիոն գրոշի ներքո լսում էին հռետորներին, որոնք խոսում էին բոլոր շորս լեզուներով, բացատրում էին բանվորական հարցի էությունը (նրա տնտեսական և քաղաքական կողմերը), քննադատում էին ժամանակակից պետական ռեժիմը... Հետաքրքիր էր տեսնել, թե ինչպես միատեսակ պայմանները միավորել էին տարբեր ազգությունների բանվորներին, ինչպես այս խուլ անկյունում բանվորները վճռեցին ինչ էլ որ լինի դիմանալ մինչև իրենց պահանջների բավարարումը»[1]։

Հայ ադրբեջանական կոտորածների շրջանում կովկասյան տարբեր ազգերի բանվորների ու գյուղացիների այդ հզոր ցույցերը ծանր հարված էին բոլոր նրանց, ովքեր փորձում էին պառակտել կովկասյան բազմազգ պրոլետարիատի դասակարգային համերաշխությունը։

Գործադուլավոր բանվորների համերաշխությունը և տոկունությունը պսակվեց հաղթանակով։

Գործարանային վարչությունը ստիպված եղավ բանակցելու բանվորական հանձնաժողովի հետ և կոլեկտիվ պայմանագիր կնքելու գործադուլավոր բանվորների լիազորների հետ։

1905 թ. դեկտեմբերին, ռուսական ռևոլյուցիայի վերելքի հետ միասին, ռևոլյուցիոն շարժումը ավելի է աճում նաև Լոռում։ Ավելի հաճախակի են դառնում Ալավերդու բանվորների ու երկաթուղայինների գործադուլները, քաղաքական-մասսայական ցույցերը, ագրարային շարժումները։ Գյուղական երիտասարդությունը մասսայաբար հրաժարվում է բանակ գնալուց։

Դեկտեմբերյան ապստամբության պարտությունից հետո, ռևոլյուցիայի աստիճանական վայրէջքի շրջանում, Լոռու բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն պայքարը չի դադարում։ Շարժումն աճում է խորությամբ՝ ընդգրկելով ավելի լայն մասսաներ։ Բոլշևիկյան կազմակերպությունները ավելի են ուժեղացնում իրենց աշխատանքը աշխատավորական մասսաների շրջանում, կոփում են նրանց դասակարգային գիտակցությունը։

Ռևոլյուցիայի տարիներին ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպությունը իդեապես և կազմակերպչորեն ամրապնդվելով՝ դարձել էր կովկասյան բոլշևիկյան ուժեղ կազմակերպություններից մեկը։ Նրա գլխավորությամբ 1906 թ. օգոստոսին կազմակերպվեց Ալավերդու բանվորների մոտ մեկ ամիս տևող նշանավոր գործադուլը, որին մասնակցում էին 4500 բանվորներ։ ՌՍԴԲՊ Կովկասյան մարզային բյուրոյի հանձնարարությամբ գործադուլը ղեկավարում էին Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը, որոնք գործադուլը սկսվելուն պես եկան Ալավերդի, կանգնեցին գործադուլի գլուխ։ Գործադուլի ժամանակ կոմիտեն բաց թողեց մի շարք թռուցիկներ՝ ուղղված բանվորներին և հարևան գյուղերի գյուղացիներին։

Օգոստոսի վերջերին գործադուլը դաժանորեն ճնշվեց Բորչալուի գավառում գործող գնդապետ Զոլոտարևի գլխավորած պատժիչ արշավախմբի կողմից։ Ավելի քան 2000 բանվորներ արտաքսվեցին Ալավերդուց։

Այդ գործում իրենց նողկալի դեմքը ցույց տվեցին դաշնակցականները, որոնք աշխատում էին պառակտել բանվորների միասնությունը, մատնում, ոստիկանության ձեռքն էին հանձնում առաջավոր բանվորներին։

[1] „Кавказский рабочий листок", 1905, 30 ноябрь, № 6.

Բնութագրելով դաշնակցության դասակարգային էությունը, Շահումյանը 1906 թ. գրել է. «Կովկասի հայ բուրժուազիան բնականորեն «Դաշնակցություն», պարտիայի մեջ տեսնում էր իր հարազատ զավակին, իր լավագույն դաշնակցին, իր շահերի լավագույն արտահայտչին ու պաշտպանին, ուստի և բոլոր ուժերով նյութապես ու բարոյապես օգնում էր այդ պարտիային»[1]։

Բոլշևիկյան «Նոր խոսք» լրագրում գործադուլի պարտության առթիվ ընդարձակ հոդվածով հանդես եկավ Ստ. Շահումյանը և հանգամանորեն վերլուծեց այդ պարտության պատճառները։

Չնայած գործադուլի պարտությանը, այնուամենայնիվ նա մի անգամ ևս ցույց տվեց բանվորների աճած կազմակերպվածությունը, տեղական բոլշևիկյան կազմակերպության ամրապնդումը։

Ալավերդու բանվորների օգոստոսյան գործադուլը իր ազդեցությամբ խոշոր նշանակություն ունեցավ Հայաստանում բանվորական շարժման հետագա ծավալման համար։

Լոռում Ստ. Շահումյանի ծավալած պարտիական աշխատանքի փայլուն վկայությունն են հանդիսանում Պարտիայի 5-րդ համագումարին նախորդող շրջանում ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպության երեք կոնֆերենցիաները, որոնք բացահայտեցին ոչ միայն ռևոլյուցիայի շրջանում Լոռու բոլշևիկյան կազմակերպությունների իդեական ու կազմակերպչական ամրապնդումը, աշխատավորական մասսաների համախմբման նրանց կարողությունը, այլև դրսևորեցին ներպարտիական խորը հակասություններ բոլշևիկների և կովկասյան մենշևիկների միջև։ Մենշևիկները ժամանակավորապես իրենց ձեռքը գցելով ՌՍԴԲՊ Թիֆլիսի կազմակերպության ղեկավարությունը, փորձում էին լիկվիդացիայի ենթարկել կովկասյան բոլշևիկների հուսալի հենարաններից մեկը՝ ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպությունը։

ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպության առաջին կոնֆերենցիան տեղի ունեցավ 1906 թ. հոկտեմբերին, որին մասնակցում էին տեղական 10 կազմակերպությունների ներկայացուցիչները։ Կոնֆերենցիան քննարկեց մի շարք հարցեր, ինչպես, օրինակ՝ բուրժուական ազգայնական պարտիաների նկատմամբ ունենալիք վերաբերմունքի խնդիրը, դումայական կոմպանիայի անցկացման հարցը և այլն[2]։ Կոնֆերենցիան կազմակերպչորեն ճանաչեց Լոռում մեկ-երկու տարի առաջ ստեղծված պարտիական խմբակները և նրանք ձևակերպեց իբրև տեղական բոլշևիկյան կազմակերպություններ։

ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպության երկրորդ կոնֆերենցիան տեղի ունեցավ 1906 թ. դեկտեմբերի 15-ին՝ դարձյալ Ստ. Շահումյանի ղեկավարմասնակցությամբ։ Կովկասյան բոլշևիկների օրգան «Դրո» («Ժամանակ») թերթի վկայությամբ[3], կոնֆերենցիային մասնակցում էին 20 տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ։ Աքորիի, Քոլագերանի կազմակերպություններից ներկայացուցիչներ չեն եղել[4]։

---

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 224։

[2] Տե՛ս Ստ. Շահումյան, Հոդվածներ և ճառեր, 1933, էջ 76։

[3] «Դրո», 1907, № 19։

[4] ՌՍԴԲՊ 5-րդ համագումարում Շահումյանը մանդատային հանձնաժողովի իր զեկուցման մեջ նշում էր, որ ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպության 1906 թ. դեկտեմբերյան կոնֆերենցիայում ներկայացված էին 21 կազմակերպություններ։

ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպության դեկտեմբերյան կոնֆերենցիայի կարևորագույն հարցը 1907 թ. մայիսին նշանակված ՌՍԴԲՊ 5-րդ համագումարի համար դելեգատների ընտրությունն էր։ ՌՍԴԲՊ Բորչալուի (Լոռու) բոլշևիկյան կազմակերպությունը, որը 1906 թվականի վերջերին իր շարքերում հաշվում էր պարտիայի մոտ 1200 անդամներ, ՌՍԴԲՊ 5-րդ համագումարի դելեգատներ ընտրեց Ստեփան Շահումյանին և Լոռուն ամրացված պրոպագանդիստ-կազմակերպիչ Ասատուր Կախոյանին (հայտնի է «Բորչալինսկի» պարտիական անունով)։ Խորհրդակցական ձայնի իրավունքով համագումարի դելեգատ ընտրվեց Միխա Ցխակայան։

Բոլշևիկյան «Դրո» թերթը տպագրել է ուշագրավ տվյալներ կոնֆերենցիայի աշխատանքների մասին։ Պարզվում է, որ Ստ. Շահումյանը Հաղպատում ստացել է 65 ձայն, Ղաչաղանում՝ 70, Որնակում՝ 45, Քոլագերանում՝ 40, Սանահին կայարանի կազմակերպությունում՝ 35, Ալավերդու կազմակերպությունում՝ 25[1], Կուրթանում՝ 200, Ծաթերում՝ 30, Ջալալօղլում՝ 15։ Այսպիսով, Ստ. Շահումյանին Լոռում ձայն են տվել 535 բոլշևիկներ։ Աս. Կախոյանին ձայն են տվել 502 պարտ. անդամներ, որից Լեջանում՝ 100, Հագվիում՝ 60, Վարդաբլուրում՝ 100, Քարինջում՝ 80, Աքորիում՝ 112 և Մղարթում՝ 50։

Այսպիսով, համագումարի դելեգատների օգտին ձայն են տվել 1037 բոլշևիկներ։

Վերոհիշյալ փաստերը, առանց կոմենտարիաների, իրենք են խոսում այն բանի օգտին, որ ռևոլյուցիայի տարիներին Լոռում կային մեր պարտիայի տեղական ամուր կազմակերպություններ։

ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպության դեկտեմբերյան կոնֆերենցիայում համագումարի համար միայն բոլշևիկ դելեգատների ընտրության փաստը բոլշևիկյան պարտիայի խոշոր հաղթանակն էր կովկասյան մենշևիկների դեմ, որոնք ամեն կերպ փորձում էին արգելակել համագումարի բոլշևիկ դելեգատների ընտրության գործը Կովկասում։ Մենշևիկները կանգ չէին առնում ոչ մի ստորության առաջ, միայն թե մեծամասնություն գրավեին համագումարում։ Անհրաժեշտ եղավ Լենինի գլխավորած բոլշևիկյան կազմակերպությունների եռանդուն աշխատանքը, որպեսզի տեղերում ձախողվեին մենշևիկների բոլոր տեսակի մեքենայությունները, համագումարում ավելի շատ մենշևիկ դելեգատներ անցկացնելու նրանց ձգտումը։

Կովկասյան մենշևիկները՝ հանձին ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպության տեսնում էին տեղական բոլշևիկյան ամուր կազմակերպություններից մեկին, որը լայն կապեր ուներ մասսաների հետ։ Այդ պատճառով էլ նրանք, ինչպես նախորդ շրջանում, այնպես էլ հատկապես դեկտեմբերյան կոնֆերենցիայից հետո փորձում էին անտեսել այդ կազմակերպությունը և նրա կատարած հսկայական աշխատանքը։

Իրենց ձեռքը գցելով ՌՍԴԲՊ Թիֆլիսի կոմիտեի ղեկավարությունը, մենշևիկները ոչ մի օժանդակություն ցույց չէին տալիս ՌՍԴԲՊ Բորչալուի կազմա-

---

[1] Պետք է նկատի ունենալ, որ 1905 թ. դեկտեմբերյան ապստամբության, ինչպես նաև Ալավերդու 1906 թ. օգոստոսյան գործադուլի ճնշումից հետո ինչպես Ալավերդու, այնպես էլ Սանահինի կազմակերպությունների շատ անդամներ կամ ձերբակալվել էին ցարական իշխանությունների կողմից, կամ տեղափոխվել, կամ էլ անցել էին ընդհատակ

կերպությանը։ Բանը հասել էր այնտեղ, որ մենշևիկները հրաժարվեցին ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպությունը մասնակից դարձնել 1906 թ. սեպտեմբերին հրավիրված ՌՍԴԲՊ Կովկասյան կազմակերպությունների կոնֆերենցիային։

Դեկտեմբերյան կոնֆերենցիայից հետո մենշևիկները հրաժարվեցին ճանաչել պարտիայի համագումարի համար կոնֆերենցիայում ընտրված բոլշևիկ դելեգատների իրավունքների օրինականությունը։ Կովկասյան մենշևիկները վայնասուն բարձրացրին՝ հայտարարելով, որ իբր թե ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպությունը համագումարի դելեգատներ ընտրելու իրավունք չունի, «որովհետև նա ոչ թե կազմակերպություն է, այլ խումբ»։ Սա բոլշևիկների դեմ մենշևիկյան պայքարի սովորական դարձած ձևերից մեկն էր, որից մենշևիկները օգտվել էին նաև Պարտիայի 4-րդ համագումարին նախորդող շրջանում։

Իրականում ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպությունը Թիֆլիսի կոմիտեի կողմից ճանաչվել էր դեռևս 1906 թ. մայիսին[1]։

Իրենց ձեռքում ունենալով ՌՍԴԲՊ Թիֆլիսի կոմիտեի ղեկավարությունը, մենշևիկները Թիֆլիսի իրենց կոնֆերենցիայում հասան այն բանին, որ չճանաչեցին ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպության գոյությունը և դեկտեմբերյան կոնֆերենցիայում ընտրված դելեգատների իրավունքների օրինականությունը։ Մենշևիկները կոնֆերենցիայում մերժեցին բոլշևիկների առաջարկը՝ տեղում բոլշևիկ դելեգատների ընտրության փաստական արդյունքները հանձնաժողովի միջոցով ստուգելու վերաբերյալ։

Մենշևիկների դավաճանական վարքագծի մերկացմամբ 1907 թ. մարտի իր 11, 12, 14 համարներում հանդես եկավ կովկասյան բոլշևիկների մարտական օրգան «Դրոշ»-ն, որը մերկացնում էր մենշևիկներին հատկապես այն բանի համար, որ նրանք փորձում էին պրոլետարական պարտիան վերածել մանրբուրժուական պարտիայի և այդ տեսակետից էլ հաշվի չէին առնում անդրկովկասյան այնպիսի նշանավոր պրոլետարական կենտրոն, ինչպիսին Ալավերդին էր։

Բորչալուի բոլշևիկ դելեգատների մանդատների շուրջը կովկասյան մենշևիկների վարքագծի պարզ դառնալուց հետո, կովկասյան բոլշևիկները նախապատրաստական եռանդուն աշխատանք ծավալեցին՝ Լոռում արտակարգ կոնֆերենցիայի հրավիրման ուղղությամբ, որպեսզի հակառակ Թիֆլիսի մենշևիկյան կոնֆերենցիայի որոշման՝ վերստին հաստատեն բոլշևիկ դելեգատների իրավունքների օրինականությունը։

Մենշևիկյան մեքենայությունների դեմ բոլշևիկների պայքարի ղեկավարությունը իր ձեռքը վերցրեց Ստ. Շահումյանը։

1907 թ. մարտին Լեջան գյուղում հրավիրվեց ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպության երրորդ կոնֆերենցիան, որին մասնակցում էին տեղական 15 պարտիական կազմակերպությունների ներկայացուցիչներ. 11-ը՝ վճռական, 4-ը խորհրդակցական ձայնի իրավունքով[2]։ Նրանց օգտին տեղական կազմակերպությունների ժողովներում տրվել էր 928 ձայն։ Ձայների որոշ չափով պակասելը պետք է բացատրել ուժեղացող ռեակցիայով և կոնֆերենցիայի շուտափույթ հրավիրումով։

[1] Տես «Դրոշ», 1907, 24 մարտ, № 12։
[2] Նույն տեղում, № 19։

Կոնֆերենցիան վճռականորեն հերքեց կովկասյան մենշևիկների հերյուրանքները ՌՍԴԲՊ Բորչալուի բոլշևիկյան կազմակերպության հասցեին։

Շարադրելով կոնֆերենցիայի բանաձևը ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպության գործունեության վերաբերյալ, «Դրոշ»-ն գրում էր. «Գյուղերում մինչև վերջը ձևավորված պարտիական կազմակերպությունները արդեն տաս ամիս էր, իսկ մի քանիսում էլ 1—2 տարի էր, որ գոյություն ունեին։ 1906 թվականի հոկտեմբերին ամենուրեք ստեղծվել էին պարտիական կազմակերպություններ, հաշվի առնվել պարտիայի անդամների քանակը և դեմոկրատական ընտրությունների հիման վրա ստեղծվել էին ենթակոմիտեներ, որոնք բոլոր գյուղերում բաղկացած էին երեք կամ հինգ մարդուց։ Բոլոր կազմակերպություններում քննարկվել է դրամարկղ ստեղծելու հարցը, բայց նկատի ունենալով պարտիայի տեղական կազմակերպության անդամների ծայրահեղ չքավորությունը, անդամները չեն կարողացել ամսե-ամիս մուծել անդամավճարները[1]։ Թեպետ և ոչ ամեն ամիս, բայց պարտիայի անդամները այնուամենայնիվ անդամավճարներ վճարել են։ Այդ պատճառով Բորչալուի կազմակերպության երրորդ կոնֆերենցիան հայտարարում է, որ Թիֆլիսի կոնֆերենցիայի որոշումը այն մասին, թե Բորչալուի կազմակերպությունը գոյություն չունի, ոչ մի բանի վրա հիմնված չէ»[2]։ Այդ նույն բանաձևում խոսվում էր 1906 թ. հոկտեմբերի 25-ի և դեկտեմբերի 15-ի կոնֆերենցիաների մասին, իբրև Բորչալուի կազմակերպության գոյության անառարկելի ապացույցների, նշվում էր, որ այդ կոնֆերենցիաները լավ հայտնի են եղել Թիֆլիսի մենշևիկյան կոմիտեի գյուղական հանձնաժողովին։

Կոնֆերենցիան մերժեց Թիֆլիսի մենշևիկյան կոնֆերենցիայի որոշումը՝ Բորչալուի կազմակերպության կողմից համագումարի համար ընտրված դելեգատների իրավունքները չճանաչելու վերաբերյալ։

Լեջանի կոնֆերենցիան քննարկեց նաև ագրարային և կազմակերպչական հարցեր։

Կոնֆերենցիան արձանագրեց, որ բոլշևիկյան եռանդուն աշխատանքի շնորհիվ լուրջ նվաճումներ են ձեռք բերվել գյուղերում, առավելապես կալվածատիրական գյուղերում։ Միևնույն ժամանակ կոնֆերենցիան նշեց, որ «դաշնակցություն պարտիան Լոռում իսպառ լիկվիդացիայի է ենթարկվել»[3]։

Լեջանի կոնֆերենցիան ցույց տվեց, որ Լոռու բոլշևիկյան կազմակերպությունը ռևոլյուցիայի տարիներին աճել էր իդեապես և կազմակերպչորեն, դառնալով մեր պարտիայի ուժեղ կազմակերպություններից մեկը։

1907 թվականի գարնան և ամռան ամիսներին, չնայած ռեակցիայի հարձակմանը, Լոռում գյուղացիական ռևոլյուցիոն շարժումները շարունակվում էին։ Այժմ գյուղացիության ռևոլյուցիոն պայքարը գնում էր այն ուղղությամբ, որպեսզի հարձակվող ռեակցիայից պահպանվեին այն նվաճումները, որոնք գյուղացիները ձեռք էին բերել նախորդ տարիներին։ Այդ տեսակետից կարևոր նշանակություն ունի ագրարային հարցի կապակցությամբ Լեջանի կոնֆերենցիայի ընդունած «Ընկերներ» նշանավոր բանաձև-կոչը[4], որը հանդիսացավ

---

1 Մենշևիկները չճանաչելով Բորչալուի բոլշևիկյան կազմակերպությունը պատրվակ էին բռնում նաև այն, որ իրը կազմակերպության անդամները անդամավճարներ չեն մուծել։

2 «Դրոշ», № 19։

3 Մարքսիզմ-լենինիզմի ինստ. Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 40, գ. 6, թ. 51։

4 Նույն տեղում, ֆ. 33, գ. 361, թ. 1։

գյուղում սոցիալ-դեմոկրատական աշխատանքի կազմակերպման կոնկրետ, մարտական ծրագիր։

Նշելով Կուրթան, Վարդաբլուր, Քոլագերան. Աքորի, Ղաչաղան, Մղարթ, Ծաթեր և այլ գյուղերի պարտիական կազմակերպությունների մերձավոր խնդիրները, «Ընկերներ» կոչով կոնֆերենցիան միաժամանակ դիմելով Լոռու բոլոր գյուղացիներին գրում էր. «Ընկերներ, մենք կոչ ենք անում ձեզ ստվարացնել ձեր շարքերը, ամրացնել ձեր կազմակերպությունները և համերաշխ ձեր քաղաքների բանվոր ընկերների հետ, դիմել դեպի այն մեծ նպատակը, որ դրված է մեր առաջ։ Միայն միատեղ կռվով, միայն գյուղական և քաղաքային պրոլետարիատի միացած ուժերով կարելի է տապալել շահագործության ու ճնշումների ռեժիմը և ձեռք բերել ազատություն ժողովրդի համար։

Պետք է պատրաստվեք. որպեսզի միացած ուժերով ամբողջ Ռուսաստանի գյուղացիության հետ միասին, հետ խլեք ազնվականների ու կառավարության ձեռքից բոլոր հողերը։ Ամբողջ հողը գյուղացիներին և ամբողջ ազատությունը ժողովրդին, այս է մեր սրբազան պահանջը»։

Պարտիայի 5-րդ (Լոնդոնի) համագումարում ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպության կողմից ընտրված բոլշևիկ դելեգատները փայլուն գործունեություն ծավալեցին մենշևիզմը մերկացնելու, համագումարում լենինիզմի հաղթանակը ապահովելու գործում։

Ընտրվելով Մանդատային հանձնաժողովի կազմում, Ստ. Շահումյանը իր փայլուն ելույթում բացահայտեց կովկասյան մենշևիկների կազմակերպական օպորտունիզմը և նրանց կողմից աշխատավորական մասսաների շահերի բացահայտ դավաճանությունը՝ մասնավորապես բոլշևիկ դելեգատների իրավունքները չճանաչելու հարցում։ Նա ասաց.

...«Մեզ՝ Բորչալուի կազմակերպության երկու պատգամավորներիս, ձայն է տվել 1037 մարդ։ ...Ասում են, թե դրանք պարտիայի անդամներ չեն։ Ինչպես տեսնում եք մեր փաստաթղթերից և տեղերում կազմված տասնյակ արձանագրություններից, նրանք իրենց համարում են պարտիայի անդամներ, քննության են առնում մեր համագումարի օրակարգը, բանաձևեր են ընդունում և դելեգատներ են ընտրում պարտիական համագումարի համար ...Ասում են, թե Բորչալուի գավառում դեմոկրատական, անպարտիական աշխատանք է տարվել, թե այնտեղ ս.-դ. աշխատանք չի եղել։ Ես հարց եմ տալիս,— դեմոկրատակա՞ն աշխատանք է արդյոք Ալավերդու գործարանում գրեթե մի ամիս տևող հսկայական գործադուլի ղեկավարությունը, գործադուլ, որին մասնակցում էր 4500 մարդ, սղոցարանի գործադուլի ղեկավարումը, որին մասնակցում էր 200 մարդ։ Դեմոկրատակա՞ն աշխատանք է արդյոք երկաթուղային բանվորների կազմակերպումը, Սանահինի դեպոյի բանվորների և Բորչալուի գավառի շատ գործարանների բանվորների կազմակերպումը... Ուրեմն Թիֆլիսի կազմակերպությունը չգիտե՞ այն աշխատանքի մասին, որ կատարվում է Բորչալուի գավառում,— շարունակում էր Շահումյանը։ Ո՛չ, նա հիանալի գիտե այդ մասին։ Ալավերդու գործարանում եղած գործադուլի ժամանակ նա իր ներկայացուցիչներին օգնության ուղարկեց Բորչալուի կազմակերպությանը և նույն թվում նաև ինձ։ Թիֆլիսի կազմակերպությունը երկու անդամ ուղարկել է ինձ, որպես իր ներկայացուցչի, Բորչալուի կազմակերպության կոնֆերենցիաներին, որոնք տեղի ունեցան 1906 թ. հոկտեմբերի 15-ին և դեկտեմբերի 25-ին, որոնցից առաջինում ներկայացված էին 10 տեղական կազմակերպություններ, երկրորդում՝ 21

կազմակերպություններ, և որոնք քննության առան մի շարք պարտիական հարցեր... Դատեցեք, ընկերներ,— դիմում է Շահումյանը համագումարին,— ինչ արժեք ունի կովկասյան մենշևիկների կողմից մեր մանդատների այդքան տաք վիճարկումը»[1]։

Հայտնի է, որ Բորչալուի բոլշևիկ դելեգատների մանդատների օրինականության շուրջը մենշևիկների նախահամագումարյան և համագումարյան շրջանում ծավալած պայքարը համագումարում ավարտվեց կովկասյան մենշևիկների համար խայտառակ պարտությամբ։ Համագումարը իր բոլշևիկյան մեծամասնությամբ հաստատեց ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպության բոլշևիկ դելեգատների մանդատների օրինականությունը։

1908 թ. ապրիլի 15-ին Լոռում գումարվեց տեղական բոլշևիկյան կազմակերպությունների ժողով, որը իր զայրույթը հայտնեց Թիֆլիսի մենշևիկների դավաճանական վարքագծի դեմ։ Ընդունված բանաձևում, որը ի միջիայլոց կնքված է ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպության կնիքով, նշվում էր.

«1. Պահանջել վերջնականապես պատասխան Թիֆլիսի կազմակերպությունից թե ուշադրություն պիտի դարձնեն Բորչալուի մասին թե ոչ. եթե մնում են անուշադիր, պահանջել Կենտրոնական Կոմիտեի հասցեն, որ բողոքներ տվին Թիֆլիսի կազմակերպությունից...

3. Պահանջել Թիֆլիսի կազմակերպությունից փորձված պրոպագանդիստ, մեկը հայ, իսկ մյուսը թուրք, որոնց մեծ պահանջ է զգացվում»[2]։

ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպության այդ որոշումը լրացվում և որոշակիորեն պարզաբանվում է կովկասյան բոլշևիկների «Борьба» ամսագրի 1908 թ. հունիսի համարում[3] լույս տեսած «Բորչալու» հոդվածում։ Այդ հոդվածը, որը «Դրո»-ի № 19-ում լույս տեսած «Բորչալուի կազմակերպության կոնֆերենցիան» հոդվածի հետ մեկտեղ օգտագործվում է առաջին անգամ, լույս է սփռում կովկասյան մենշևիկների դեմ Ստ. Շահումյանի գլխավորած ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպության պայքարի հարցերի վրա։

«Борьба»-ն խոսում էր Լոռու բոլշևիկյան տեղական կազմակերպությունների ակտիվ գործունեության մասին՝ ստոլիպինյան ռեակցիայի ծանր պայմաններում և միաժամանակ քննադատում էր կովկասյան մենշևիկներին, որոնք՝ վարելով լիկվիդատորական դիծ, ձգտում էին ամենուրեք լիկվիդացնել պարտիական կազմակերպությունները։

«Борьба»-ն հաղորդում էր, որ անդրկովկասյան կազմակերպությունների մենշևիկյան համագումարը[4] բանաձև է ընդունել այն մասին, որ իբրև թե Բորչալուի կազմակերպությունը փաստորեն չի գործում և «այդ բանը արվել է խորը դոհունակության զգացմունքով»։ Բոլշևիկյան ամսագիրը իր վերաբերմունքը ցույց տալով մենշևիկների նման արարքին, գրում էր, որ «...մի ամբողջ կազմակերպության գոյության հարցը կարող է լուծել ոչ թե ինչ որ կոպիտ բանաձևը, այլ փաստերը»։ Իսկ փաստերը վկայում էին, որ մինչև անդրկովկասյան

[1] Ստ. Շահումյան, Հոդվածներ և ճառեր, էջ 75—76։

[2] Մարքսիզմ-լենինիզմի ինստ. Հայկական ֆիլիալի արխիվ։

[3] „Борьба" ամսագիրը հրատարակվել է Թիֆլիսում 1908 թվականի հունիս--հոկտեմբեր ամիսներին։ Լույս է տեսել 4 համար, որից № 1-ը հունիսին և №№ 2—4-ը (հուլիս--հոկտեմբեր) հոկտեմբերին։

[4] Խոսքը անդրկովկասյան ս.-դ. կազմակերպությունների 3-րդ համագումարի մասին է, որը իր կազմով հիմնականում մենշևիկյան լինելով ընդունել էր օպորտունիստական բանաձևեր։

կազմակերպությունների համագումարի հրավիրումը՝ մենշևիկները հրավիրում են Թիֆլիսի օկրուգային — այսպես կոչված «գյուղական կոնֆերենցիան»։ Իմանալով այդ մասին, կոնֆերենցիա էին եկել նաև Լոռու բոլշևիկների ներկայացուցիչները։ Սակայն, ինչպես վկայում է «Борьба»-ն, մենշևիկները սկսում են խաղ խաղալ Լոռու բոլշևիկ ներկայացուցիչների գլխին։ Նրանց հայտնվում է, որ իբր կոնֆերենցիան տեղի չի ունենալու — «բոլոր դելեգատները չեն եկել», անորոշ ձևով խորհուրդ են տալիս՝ «սպասել», իսկ հետո՝ «վերադառնալ»։ Եվ երբ բոլշևիկները վերադառնում են, «...մենշևիկները հրավիրեցին կոնֆերենցիան և ուրախանում էին բորչալեցիների գլխին խաղացած այդ ճարպիկ աշխատության համար»[1]։ Սակայն, ինչպես երևում էր, մենշևիկները չհամարձակվեցին բոլորովին հաշվի չառնել Բորչալուի կազմակերպությունը և օկրուգային կոմիտեի (գյուղական հանձնաժողով) կազմում ընտրեցին Բորչալուի բոլշևիկներից մեկին։ «Борьба»-ն զարմացած հարցնում էր, թե ինչպես կարելի է հաշտեցնել մի ամբողջ կազմակերպություն ոչնչացնող բանաձևը նույն կազմակերպության գոյությունը հաստատող մի այլ որոշման հետ։

Տալով մենշևիկների լիկվիդատորական գործունեության վերոհիշյալ ակնառու փաստերի բոլշևիկյան գնահատականը, «Борьба»-ն գրում էր. «Ֆրակցիոն տարաձայնություններով կուրացած մենշևիկները չէին ձգտում միայն ցույց տալ. որ Բորչալուում ոչ մի կազմակերպություն չկա։ Իրենց գործողություններով, ավելի ճիշտ, անգործությամբ նրանք ձգտում էին կործանել այն, ինչը պահպանվել է։ Չնայած պրոպագանդիստի պահանջի վերաբերյալ բորչալեցիների համառ պնդումներին, նրանք չուղարկեցին այնտեղ ոչ ոքի։ Անուշադրության մատնված մի ամբողջ շրջանում, որտեղ կան մի քանի հազար բանվորներ, Ալավերդու հսկայական գործարանը 2000 բանվորով[2], հողազուրկ գյուղացիությունը,— չկա պարտիական և ոչ մի աշխատող։

Հարցը դրվում էր այսպես. Բորչալուում պետք է աշխատի կամ մենշևիկ, կամ ոչ ոք։

Ապարդյուն հույսերից և երկար սպասումներից հետո Թիֆլիսի բոլշևիկները հասկացան, որ այլևս սպասելու կարիք չկա։ Նրանք վճռեցին ուղարկել մի ընկեր իրենց հաշվին։ Մեծ դժվարություններով նրանք հավաքեցին մի քանի գռոշ և ընկերը մեկնեց։ Կարճ ժամանակամիջոցում այդ ընկերը կարողացավ կազմակերպել աշխատանքը»[3]։

Համառոտակի, ամենահիմնական գծերով սրանք են գլխավոր դրվագները այն մեծ աշխատանքի, որ կատարել է Ստ. Շահումյանը Լոռում ռևոլյուցիոն մարքսիստական կազմակերպությունների ստեղծման, նրանց իդեական և կազմակերպչական ամրապնդման, ինչպես նաև տեղական բուրժուական նացիոնալիստների և կովկասյան մենշևիկ-լիկվիդատորների դեմ մղված համառ պայքարում։

---

[1] „Борьба", 1908, № 1.

[2] Պետք է նկատի ունենալ, որ 1906 թ. օգոստոսյան գործադուլը դաժանորեն ճնշելուց հետո ցարական իշխանությունները Ալավերդուց արտաքսեցին ավելի քան 2000 բանվորների։

[3] „Борьба", 1908, № 1.